ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու մասին

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է արտաքին մրցույթ՝ Նախարարության ընդերքի վարչության ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.12-Մ2-1) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Արտաքին մրցույթին կարող են մասնակցել ՀՀ քաղաքացիները, որոնք բավարարում են հայտարարված թափուր պաշտոնի անձնագրի պահանջներին:

Նախարարության ընդերքի վարչության ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 22-33.12-Մ2-1) պաշտոնի բնութագրի, պաշտոնն զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակը կցվում է:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը ներկայացվում են առցանց՝ https://cso.gov.am/internal-external-competitions հղումով՝ 2026 թվականի փետրվարի 20-ից մինչև 2026 թվականի փետրվարի 27-ը ներառյալ՝ մինչև վերջին աշխատանքային օրվա ժամը 24.00-ն:

<u>Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ՝</u>

1.դիմումը (ձևը լրացվում է էլեկտրոնային եղանակով),

2. ինքնակենսագրությունը (ձևը լրացվում է էլեկտրոնային եղանակով),
3. անձնագրի, նույնականացման քարտի լուսապատճենները (եթե անձը նույնականացման քարտ չի ներկայացնում, ապա պետք է ներկայացնի հանրային ծառայությունների համարանիշ կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի լուսապատճենը),
4. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի լուսապատճենը,
5. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի (աշխատանքային պայմանագիր, աշխատանքի ընդունման մասին իրավական ակտ, աշխատանքային գրքույկ) լուսապատճենը,
6. արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասի կցագրման վկայականի լուսապատճենը,

7. լուսանկար՝ 3×4 սմ չափի:

Անհրաժեշտ է ներկայացնել վերոնշյալ փաստաթղթերի լուսապատճենները արված բնօրինակից (օտարալեզու փաստաթղթերի դեպքում՝ նաև հայերեն պաշտոնական թարգմանությունների):

<u>Փաստաթղթերն առցանց ներկայացնելու ընթացակարգ.</u>

Քաղաքացիները Թեստավորմանը պետք է ներկայանան անձնագրով և/կամ նույնականացման քարտով, կամ անձը հաստատող այլ փաստաթղթով (ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ):

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են էլեկտրոնային եղանակով՝ Քաղաքացիական ծառայության գրասենյակի կայքէջի՝ https://cso.gov.am/ միջոցով: Էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է այցելել https://cso.gov.am/ կայքէջի «Գլխավոր» էջի «Մրցույթների հայտարարություններ» բաժնի «Ղեկավար և մասնագիտական» ենթաբաժին: Ծանոթանալով մրցույթի մասին հրապարակված հայտարարության բովանդակությանը՝ քաղաքացին կարող է հայտարարության տեքստի վերջում նշված «Դիմել» ստեղնի օգնությամբ ներկայացնել էլեկտրոնային դիմում: Սեղմելով «Դիմել» ստեղնը՝ բացվում է «Մուտք» պատուհանը, որտեղ անհրաժեշտ է լրացնել վավեր էլեկտրոնային փոստի հասցե, գաղտնաբառ և սեղմել «Գրանցվել» կոճակը, եթե առաջին անգամ է դիմում ներկայացվում վերոնշյալ կայքէջի միջոցով, իսկ եթե արդեն գրանցված է, անհրաժեշտ է սեղմել «Մուտք» կոճակը:

Հաջորդ քայլով անհրաժեշտ է բացված պատուհանի վերևի աջ անկյունում՝ «Իմ էջը» բաժնում լրացնել անձնական տվյալները և «Կրթություն», «Օտար լեզուներ», «Համակարգչային ծրագրեր» բաժինները, պարտադիր լրացման ենթակա բոլոր դաշտերը, կցել հայտարարության մեջ նշված անհրաժեշտ փաստաթղթերի լուսապատճենները, լուսանկարը և սեղմել «Պահպանել փոփոխությունները» ստեղնը:

Լրացնելով «Իմ էջի» անձնական տվյալները, կցելով անհրաժեշտ փաստաթղթերը՝ անհրաժեշտ է արդեն իսկ գրանցված օգտատիրոջ էջում՝ «Մրցույթներ» բաժնում գտնել կոնկրետ պաշտոնի համար անցկացվող մրցույթի մասին հրապարակված հայտարարությունը և «Գործողություններ» ենթաբաժնի ներքո նշված «Դիմել» ստեղնով ներկայացնել դիմումը, որից անմիջապես հետո քաղաքացին ստանում է ծանուցում դիմումն ընդունվելու մասին:

Դիմումի կարգավիճակի մասին տեղեկատվություն կարելի է ստանալ նաև օգտատիրոջ անձնական էջի «Մրցույթներ» բաժնի «Հայտարարություններ» ենթաբաժնում կոնկրետ պաշտոնի համար հայտարարված մրցույթի տողում «Գործողություններ» ենթաբաժնի ներքո գրառումից, նշված հատվածում՝

ա) եթե ակտիվ է «Դիմել» ստեղնը, ապա դիմումը դեռևս գրանցված չէ,

բ) եթե ակտիվ է «Իմ դիմումը» ստեղնը, ապա դիմումը ներկայացված է Նախարարություն, և այն ուսումնասիրման փուլում է,

գ) եթե ակտիվ է «Խմբագրել» ստեղնը, ապա անհրաժեշտ է խմբագրել դիմումը՝ շտկելով փաստաթղթերի թերություններն ու սխալները, և կրկին ներկայացնել այն:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հնարավոր է փաստաթղթերը հետ վերադարձվեն քաղաքացուն՝ խմբագրման համար: Նման դեպքում քաղաքացին պարտավոր է ծանուցումն ուղարկելուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում կրկին դիմել՝ վերացնելով փաստաթղթերի թերություններն ու ուղղելով սխալները, որոնց մասին քաղաքացին ծանուցվում է «Իմ էջի» «Ծանուցումներ» բաժնի և էլեկտրոնային փոստի միջոցով: Փաստաթղթերի թերությունների և սխալների մասին մեկնաբանությունը քաղաքացին կարող է տեսնել՝ բացելով «Իմ էջի» «Մրցույթներ» բաժնի համապատասխան հայտարարության հերթական համարից առաջ դրված ⊕ նշանը:

Փաստաթղթերը խմբագրելու համար անհրաժեշտ է այցելել «Անձնական էջ»-ի «Մրցույթներ» բաժնի «Հայտարարություններ» ենթաբաժին, ընտրել կոնկրետ պաշտոնի համար հրապարակված հայտարարությունը, «Գործողություններ» ենթաբաժնի ներքո նշված «Խմբագրել» կոճակը սեղմել, կատարել փոփոխությունները և ներքևում նշված «Դիմել» կոճակի միջոցով դիմումը կրկին ներկայացնել:

Համակարգում գրանցվելուց հետո քաղաքացին իր «Անձնական էջ» կարող է մուտք գործել՝ այցելելով https://cso.gov.am/ կայքէջի «Գլխավոր» էջի «Մուտք» բաժին կամ https://hartak.cso.gov.am/ հղումի «Անձնական էջ» բաժինը, որտեղ անհրաժեշտ է լրացնել գրանցված էլեկտրոնային փոստի հասցեն և գաղտնաբառը:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2026 թվականի մարտի 23-ին՝ ժամը 11:30-ին, Ջրային կոմիտեի վարչական շենքում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Վարդանանց փող. 13ա, հարկ 5-րդ):
Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի 2026 թվականի մարտի 25-ին՝ ժամը 15:00-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության վարչական շենքում (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, 6-րդ հարկ, դահլիճ):

Մրցույթի հարցազրույցի փուլը կանցկացվի «Հարցարան» ձևաչափով:

Հիմնական աշխատավարձը Հիմնական աշխատավարձը 267072 (երկու հարյուր վաթսունյոթ հազար յոթանասուներկու) ՀՀ դրամ է:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, գործնական, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվության զգացում:

<u>ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ</u>

- ***ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ (ՔԾ ԳՐԱՍԵՆՅԱԿ)***

- «Քաղաքացիական ծառայության մասին» օրենք (Հոդվածներ՝ 2, 6, 7, 10, 11, 17, 20-24, 28, 30-36, 38)

հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/204205

- «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենք. (Հոդվածներ՝ 4-7, 20-27)

հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/207626

- «Հանրային ծառայության մասին» օրենք. (Հոդվածներ՝ 3-15, 18-23, 27.1, 28-34, 44, 53)

հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/203925

- ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով)՝ (Հոդվածներ՝ 1, 2, 5, 6, 8, 10, 14, 15, 17, 21, 25, 27, 31, 32, 34, 35, 36, 38, 40, 41, 44, 46-49, 54, 57, 66, 85, 89, 90, 96, 99, 100, 103, 104, 109, 112, 113, 118, 119, 123, 124, 136, 142, 144, 146, 147, 149-153, 159, 160, 163, 182, 185, 195, 198, 199)

հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/143723

- ***ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ (Տարածքային կառավարման նախարարություն)***

- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք. հոդվածներ՝ 3,11,12,13,17,18,20.1,30, 32,40,42,46,48,50,51,54,55

հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/178678/latest

- «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 15, 20, 21, 25, 26, 43, 46, 49

հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/194274/latest

- «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 5,6, 19.4, 35,36,37,39,41

հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/220627/latest

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք. հոդվածներ՝ 4,5,6,7,14,16,17

հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/220907/latest

- ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 6-ի «Ընդերքօգտագործման իրավունքների հաշվառման կենտրոնացված մատյանից տեղեկատվության տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1147-Ն որոշում. ամբողջ որոշումը.

հղումը՝ https://www.arlis.am/hy/acts/78175/latest

<u>ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼՈՒՄ ՍՏՈՒԳՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>

- «Քաղաքացիական ծառայության մասին» օրենք. https://www.arlis.am/hy/acts/204205/latest
- ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք. https://www.arlis.am/hy/acts/178678/latest
- «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենք. https://www.arlis.am/hy/acts/194274/latest

- Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի մայիսի 3-ի «Ընդերքաբանական փորձաքննության ներկայացվող նյութերի բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության օգտակար հանածոների պաշարների պետական հանձնաժողովի (ՀՀ ՊՊՀ) 2000 թվականի դեկտեմբերի 12-ի N 86 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 04-Ն հրաման.
  https://www.arlis.am/hy/acts/152372/latest
- ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի «Ընդերքը նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 1431-Ն որոշում.
  https://www.arlis.am/hy/acts/189771/latest
- Պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կոմպետենցիաները՝ տե՛ս պաշտոնի անձնագրում:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն N 3, հեռախոսահամար՝ 010-511-355, 010-511-316, էլեկտրոնային փոստի հասցե՝ n.kirakosyan@mta.gov.am):

Հավելված N159

Հաստատված է

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների

նախարարության գլխավոր քարտուղարի

2019թ. հոկտեմբերի 8-ի N 38-Լ հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի գլխավոր մասնագետ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ընդերքի վարչության (այսուհետ Վարչություն) ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի (այսուհետ Բաժին) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ **22-33.12-Մ2-1**)

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3

2. Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Իրականացնում է օգտակար հանածոների արդյունահանման նախագծերի, դրանց փոփոխությունների քննարկում.

2. իրականացնում է ընդերքօգտագործման նախագծերի, ծրագրերի և նրանց փոփոխությունների սահմանված կարգով ներկայացում օրենքով նախատեսված փորձաքննությունների և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման.

3. օրենքով սահմանված մերժման հիմքերի առկայության դեպքում ներկայացնում է առաջարկություն ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումի մերժման մասին.

4. իրականացնում է ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ժամանակ ընդերքօգտագործման համար արգելված ընդերքի առանձին տեղամասերի ճշգրտում և ներկայացնում առաջարկություն.

5. իրականացնում է օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության թույլտվության ժամկետի երկարաձգման համար ներկայացված դիմումին կից՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրով նախատեսված կատարված աշխատանքների մասին հաշվետվությունների ընդունում, վերլուծությունների կատարում և ներկայացնում առաջարկություն.

6. իրականացնում է ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման վերաբերյալ

առաջարկության ներկայացում.

7. իրականացնում է ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումին կից ներկայացված փաստաթղթերի փաթեթին ներկայացվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխանության, փաթեթների ամբողջականության ստուգման աշխատանքներ.

8. իրականացնում է նախարարության համաձայնեցմանը ներկայացված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերի քննարկում և ներկայացնում համաձայնեցման մասին առաջարկություն.

9. Իրականացնում է նախարարության համաձայնեցմանը ներկայացված օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերի, դրանց փոփոխությունների քննարկում և ներկայացնում համաձայնեցման մասին առաջարկություն.

10. իրականացնում է ընդերքօգտագործման իրավունքում փոփոխության, ժամկետի երկարաձգման, ընդերքիտեղամասի ընդլայնման, իրավունքի փոխանցման վերաբերյալ համաձայնության, հրաժարման հավաստագրի տրամադրման մասին առաջարկության ներկայացում.

11. իրականացնում է ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար մրցութային փաթեթի կազմման և մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված իրավաբանական անձի հետ նախնական պայմանագրի կնքման աշխատանքներ.

12. իրականացնում է ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման փուլում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների կիրառման աշխատանքներ:

13. իրականացնում է ընդերքօգտագործողից ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը լրանալուց հետո կամ դրանց հրաժարվելու դեպքում նրանց տնօրինման տակ գտնվող երկրաբանական տեղեկատվությունը երեք ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն հանձնելու պահանջման աշխատանքներ.

Իրավունքները՝

- Օգտակար հանածոների արդյունահանման նախագծերի, դրանց փոփոխությունների քննարկման արդյունքում ծանուցել օգտակար հանածոների արդյունահանման նախագծերում, դրանց փոփոխություններում առկա թերությունների մասին.
- Ընդերքօգտագործման նախագծերը, ծրագրերը և նրանց փոփոխությունները

օրենքով նախատեսված փորձաքննությունների և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման ներկայացնելու նպատակով պահանջել դիմումատուից ընդերքօգտագործման նախագծերը, ծրագրերը և դրանց փոփոխությունները ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան.

- Օրենքով սահմանված մերժման հիմքերի առկայության դեպքում ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումի մերժման մասին առաջարկության ներկայացնել Բաժնի պետին.
- Ընդերքօգտագործման համար արգելված ընդերքի առանձին տեղամասերի ճշգրտման և առաջարկության ներկայացման նպատակով ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր այլ գերատեսչություններից, նախարարության այլ ստորաբաժանումներից.
- Պահանջել դիմումատուից երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրով նախատեսված կատարված աշխատանքների մասին հաշվետվությունները ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան.
- պահանջել դիմումատուից ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար պահանջվող փաստաթղթերի լրակազմ փաթեթ.
- պահանջել դիմումատուից ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումին կից ներկայացված փաստաթղթերի փաթեթը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին, տեղեկացնել դիմումատուին դիմումին կից ներկայացված փաստաթղթերի փաթեթում առկա թերությունների վերաբերյալ.
- պահանջել դիմումատուից Նախարարության համաձայնեցմանը ներկայացված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան.
- պահանջել դիմումատուից Նախարարության համաձայնեցմանը ներկայացված օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան.
- պահանջել դիմումատուից ընդերքօգտագործման իրավունքում փոփոխության, ժամկետի երկարաձգման, ընդերքի տեղամասի ընդլայնման, իրավունքի փոխանցման վերաբերյալ համաձայնության, հրաժարման հավաստագրի տրամադրման մասին դիմումները և կից փաստաթղթերը ներկայացնել

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան.

- ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար մրցութային փաթեթի կազմման նպատակով ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն:
- ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման փուլում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների կիրառման նպատակով ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն:
- պահանջել ընդերքօգտագործողից ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը լրանալուց հետո կամ դրանց հրաժարվելու դեպքում նրանց տնօրինման տակ գտնվող երկրաբանական տեղեկատվությունը երեք ամսվա ընթացքում հանձնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն.
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթների իրականացման նպատակով ստանալ կարծիք այլ ստորաբաժանումներից, տեղեկանալ ընդերքի ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի, այլ իրավական ակտերի նախագծերի մասին:

Պարտականությունները՝

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում քննարկել օգտակար հանածոների արդյունահանման նախագծերը, դրանց փոփոխությունները.
- առաջարկության ներկայացնել ընդերքօգտագործման նախագծերը, ծրագրերը և դրանց փոփոխությունները օրենքով նախատեսված փորձաքննությունների և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման ներկայացնելու համար, պահպանել օրենսդրությամբ նախատեսված ժամկետները.
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ուսումնասիրել ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումին կից ներկայացված փաստաթղթերը, պարզել օրենքով սահմանված մերժման հիմքերի առկայությունը.
- ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ժամանակ իրականացնել ընդերքօգտագործման համար արգելված ընդերքի առանձին տեղամասերի ճշգրտում, ներկայացնել առաջարկություն ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար, պահպանել օրենսդրությամբ նախատեսված ժամկետները.
- ծանոթանալ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման մասին հաշվետվություններին,

համեմատել նախատեսված և փաստացի կատարված աշխատանքների ծավալները, վերլուծել կատարված աշխատանքները, պահպանել օրենսդրությամբ նախատեսված ժամկետները.

- ստուգել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար պահանջվող փաստաթղթերի լրակազմությունը՝ իրականացնել տեղամասի ծայրակետային կոորդինատների ճշգրտում, դիմումատուի ֆինանսական ու տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունների՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանության ստուգում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ներկայացնել առաջարկություն ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման վերաբերյալ.

- իրականացնել ընդերքօգտագործման իրավունք հայցելու դիմումին կից ներկայացված փաստաթղթերի փաթեթին ներկայացվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխանության, փաթեթների ամբողջականության ստուգում՝ տեղամասի ծայրակետային կոորդինատների ճշգրտում, դիմումատուի ֆինանսական ու տեխնիկական կարողությունների ու միջոցների մասին տեղեկությունների՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանություն, պահպանել օրենսդրությամբ նախատեսված ժամկետները.

- ծանոթանալ Նախարարության համաձայնեցմանը ներկայացված երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերին կամ դրանց փոփոխություններին, ստուգել ծրագրերին կից ներկայացված փաստաթղթերի և քարտեզագրական նյութերի համապատասխանությունը օրենսդրության պահանջներին, ծրագրերում առկա թերությունների մասին ներկայացնել առաջարկություն, լրակազմության դեպքում՝ առաջարկություն ներկայացնել ծրագրերի համաձայնեցման մասին, պահպանել օրենսդրությամբ նախատեսված ժամկետները.

- իրականացնել օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերի, դրանց փոփոխությունների քննարկում, ներկայացնել առաջարկություն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքային ծրագրերի, դրանց փոփոխությունների համաձայնեցման կամ ծրագրերում առկա թերությունների մասին, պահպանել օրենսդրությամբ նախատեսված ժամկետները.

- իրականացնել ընդերքօգտագործման իրավունքում փոփոխության, ժամկետի երկարաձգման, ընդերքի տեղամասի ընդլայնման, իրավունքի փոխանցման վերաբերյալ համաձայնության, հրաժարման հավաստագրի տրամադրման համար ներկայացված փաստաթղթերի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության ստուգում, կարծիքների և առաջարկությունների տրամադրում, պահպանել օրենսդրությամբ նախատեսված ժամկետները.

- իրականացնել ֆոնդային նյութերի ուսումնասիրություն, տվյալների մշակում, կազմել

մրցութային փաթեթ՝ ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար, իրականացնել մրցույթի կազմակերպման նախապատրաստական աշխատանքներ, պատրաստել հողի սեփականատերերի հետ կնքվող նախնական պայմանագրերը, ինչպես նաև ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված իրավաբանական անձանց հետ նախնական պայմանագրերը.

- ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման փուլում ճշտել ներկայացված աշխատանքային ծրագրի (նախագծի) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների կիրառման անհրաժեշտությունը.
- պատրաստել ընդերքօգտագործողին ուղղված ծանուցում՝ ընդերքօգտագործման իրավունքի ժամկետը լրանալուց հետո կամ դրանից հրաժարվելու դեպքում, նրանց տնօրինման տակ գտնվող երկրաբանական տեղեկատվությունը երեք ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն հանձնելու մասին.
- իրականացնել ընդերքի ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի, այլ իրավական ակտերի նախագծերի քննարկում:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

	Ուղղություն	ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	
	Ոլորտ	ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ	ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	
	Ենթաոլորտ	Երկրաբանություն	Ընդերքաբանություն	
	Մասնագիտություն	Երկրաբանություն	Լեռնային գործ և օգտակար հանածոների	Օգտակար հանածոների հարստացում

			արդյունահանում	

3.2. Մասնագիտական գիտելիքները՝

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ընդերքի օգտագործման և պահպանության երկրաբանների, երկրաֆիզիկոսների և աշխարհագետների աշխատանքների կամ ճարտարագիտության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1) Կոնֆլիկտների կառավարում
2) Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
3) Ծառայությունների մատուցում
4) Բողոքների բավարարում
5) Ժամանակի կառավարում
6) Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
7) Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և (կամ) դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և (կամ) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: